



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿՆԵՐ
ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ԶԱՎԵՆ
ԵՊԻՍԿՈՊՈՍ ՉԻՆՉԻՆՅԱՆԻՆ ԱՐԲՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ
ՇՆՈՐՀԵԼՈՒ ԱՌԹԻՎ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԶԱԽԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՉԻՆՉԻՆՅԱՆԻՆ,
ԲԱՐԵՆՆԱՄ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ՀԱՅՈՑ ԵԳԻՊՏՈՍԻ
ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ԳԱՀԻՐԷ

Փառք կու տամք Աստուծոյ Ամենակալին որ Իր սուրբ հովանիին տակ ապահով ու պայծառ կը պահպանէ մեր սուրբ եկեղեցին՝ իր եկեղեցիներով ու հաւատացեալ ժողովուրդով, ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի:

Այս մխիթարական իրականութիւնը կը պարտինք ման մեր եկեղեցւոյ սպասաւորներուն, որոնք կանգնած կը մնան իրենց մոլորական կոչումին բարձրութեան վրայ՝ իբրև հոգևոր մշակներ և ժողովուրդի առաջնորդներ:

Մեր օրերու այդ մոլորեալներու շարքին՝ մեր աւագ հոգևորականներէն մին է Ձերդ Սրբազնութիւնը, իբրև բարեխնամ առաջնորդը եգիպտահայոց պատմական թեմին, իբրև բարի և քաջ հովիւր ժողովրդեան, իբրև անձամբ-րոյթ աղօթողը ու գործողը ի շինութիւն մեր զաւակներու հոգևոր կեանքին:

Ընդառաջելով Գահիրէի և Աղեքսանդրիոյ թեմական ժողովներու միատեղ կատարուած միջնորդութեան, իբրև Հայրապետը Ձեր, սրտանց կ'ողջունենք ու կը գնահատենք անբասիր ծառայութեան Ձեր երկարամեայ բեղուն վաստակը և Ձեզ կը շնորհենք ԱՐԲՈՒԹՅԱՆ պատիւ, աղօթքով ջերմագին որ Տէրը Ձեզի պարգևէ կեանքի ու աշխատանքի երկար, շատ երկար տարիներ, որպէսզի նոր մերշնչումներով ու մշտանորոգ եռանդով շա-

րունակէք Ձեր առաքելութիւնը, յառաել շինութիւն ու պայծառութիւն մեր սուրբ եկեղեցւոյ և ի մխիթարութիւն մեր հաւատացեալ ժողովուրդին:

«Եւ դուք իբրև զվէմս կենդանիս շինիք տաճար հոգևոր, յանարատ քահանայութիւն, մատուցանել զհոգևոր պատարագս հաճոյս Աստուծոյ, ի ձեռն Յիսուսի Քրիստոսի» (Ա. Պետրոս Բ 5). ամէն:

Հայրապետական սիրով և օրհնութեամբ՝

Հարգելի

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա կոնդակս ի 26 հոկտեմբերի
1979 փրկչական ամի,
և ի տունարիս հայոց ՌՆԻԸ
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 986

